

COVID-19-ի պատվաստանյութեր – Միավալենտն ընդդեմ երկվալենտի



Գուցե լսած լինեք «միավալենտ» կամ «երկվալենտ» տերմինների մասին, որոնք օգտագործվում են՝ նկարագրելու COVID-19-ի պատվաստանյութերը: Եկեք գրուցենք այս երկու տեսակի պատվաստանյութերի տարբերությունների, ինչպես նաև թարմացված երկվալենտ խթանիչ ստանալու կարևորության մասին, եթե իրավասու եք:

Որո՞նք են միավալենտ և երկվալենտ պատվաստանյութերի տարբերությունները:

Միավալենտ պատվաստանյութը մեկ շտամից կազմված կամ որևէ վիրուսի բաղադրիչ ունեցող պատվաստանյութ է:

Երկվալենտ պատվաստանյութը երկու շտամից կազմված կամ որևէ վիրուսի բաղադրիչներ ունեցող պատվաստանյութ է:

COVID-19-ի ո՞ր պատվաստանյութերն են միավալենտ, իսկ որո՞նք՝ երկվալենտ:

Բոլոր առաջնային շարքի համար նախատեսված COVID-19-ի բնօրինակ պատվաստանյութերը և բնօրինակ խթանիչները միավալենտ են*: Այս պատվաստանյութերը ստեղծվել էին վիրուսի բնօրինակ շտամից, որն առաջացնում է COVID-19-ի հիվանդությունը:

Pfizer-ի և Moderna-ի COVID-19-ի թարմացված խթանիչները երկվալենտ են: Դրանք ստեղծվել էին COVID-19-ի բնօրինակ շտամով և օմիկրոնի ավելի նոր շտամներով, BA.4-ով և BA.5-ով:

Արդյոք երկվալենտ պատվաստանյութերն ավելի արդյունավետ են միավալենտից:

Թարմացված խթանիչների կլինիկական նախնական փորձարկումները ցույց են տվել, որ COVID-19-ի երկվալենտ խթանիչներն ավելի լայն պաշտպանություն են ապահովում COVID-19-ի հիվանդության դեմ, քան միավալենտ խթանիչները և կարող են երկարաձգել պաշտպանության ժամանակահատվածը ծանր հիվանդացությունից և/կամ մահվան դեպքերից, հատկապես օմիկրոն շտամի նկատմամբ:

**Novavax-ի խթանիչը միավալենտ է և հասանելի են այն չափահասներին, ովքեր ավարտել են առաջնային շարքը, բայց նախկինում չեն ստացել COVID-19-ի խթանիչ, և եթե նրանք չեն կարող կամ չեն ստանա մՌՆԹ թարմացված երկվալենտ խթանիչ: Novavax-ի խթանիչները չեն թիրախավորում օմիկրոն տարատեսակի շտամները:*

Ինչու՞ է երկվալենտ խթանիչ ստանալը կարևոր:

Կարևոր է ստանալ երկվալենտ խթանիչ, որովհետև այն COVID-19-ի պատվաստանյութի միակ տեսակն է, որն ստեղծվել է՝ COVID-19-ի ամենագերիշխող օմիկրոն շտամներից պաշտպանելու նպատակով, որոնք այս պահին մոլեգնում են Միացյալ Նահանգներում:

Արդյոք ես պե՞տք է ստանամ երկվալենտ խթանիչ, եթե արդեն վարակվել եմ COVID-19-ով կամ ստացել եմ սկզբնական միավալենտ խթանիչ:

Այո, խորհուրդ է տրվում, որ ստանաք թարմացված երկվալենտ խթանիչ, եթե իրավասու եք դրա համար, չնայած նախկինում վարակվել եք COVID-19-ով կամ նախնական միավալենտ խթանիչով: Առավելագույն արդյունավետության համար COVID-19-ով վերջերս վարակված անհատները կարող են դիտարկել հետաձգել COVID-19-ի որևէ պատվաստում, այդ թվում թարմացված խթանիչ դեղաչափը 3 ամսով՝ ախտանիշների ի հայտ գալուց կամ դրական թեստից հաշված:

Արդյոք որևէ հատուկ ապրանքանիշի՞ պետք է լինի իմ երկվալենտ խթանիչը:

6 ամսականից մինչև 4 տարեկան երեխաները պետք է ստանան թարմացված երկվալենտ խթանիչ, որը նույն ապրանքանիշի է ինչ իրենց առաջնային շարքը:

5 տարեկան երեխաները, ովքեր ավարտել են Pfizer-ի առաջնային շարքը, կարող են միայն ստանալ Pfizer-ի թարմացված երկվալենտ խթանիչ:

5 տարեկան երեխաները, ովքեր ավարտել են Moderna-ի առաջնային շարքը, կարող են ստանալ Moderna-ի կամ Pfizer-ի թարմացված երկվալենտ խթանիչ:

6 տարեկան կամ ավելի մեծ երեխաները, ովքեր ստացել են Moderna-ի կամ Pfizer-ի երկվալենտ խթանիչը՝ անկախ նրանից, թե որ ապրանքանիշի էին ստացել իրենց առաջնային շարքը: